ՀՏԴ 314.15:330.3(479.25)

Կ.Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, Ն.Է. ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Վանաձոր)

Հայրենիքից զատ, հայրենիքից դուրս ինձ
համար խաբուսիկ են բոլոր դրախտները:
Գարեգին Նժդեհ

Դիտարկվում են ՀՀ-ի բնակչության ժողովրդագրական պատկերը, երիտասարդության, մտավոր ներուժի արտահոսքի իրավիճակը 1913-2019 թթ-ին: Մեկնաբանությունները հիմնավորվում են ըստ վիճակագրական տվյալների կառուցված դիագրամներով ու դրանց վերլուծություններով: Տրվում են միգրացիայի և ուրբանիզացիայի կանխման ուղիների վերաբերյալ առաջարկություններ:

Առանցքային բառեր. արտագաղթ, ուրբանիզացիա, տնտեսական ճգնաժամ, զբաղվածություն, տնտեսապես ակտիվ բնակչություն:

«Հայաստան երկիր» համակարգը մեգահամակարգի տարր է, որն այսօր ձգտում է ձեռք բերել համակարգային նոր որակ՝ ժողովրդի սոցիալ-տնտեսական պայմանների, երկրի քաղաքական կայունության բարելավում: Յուրաքանչյուր համակարգի համար խիստ կարևորվում է համակարգի ինքնակազմակերպման, ինքնակարգավորման և ինքնակառավարման գործընթացը, թե որքանով նա կկարողանա ժամանակի և տարածության մեջ հավասարակշռության գալ երկրում ստեղծված քաոսային վիճակից: Հայաստանն այդ տնտեսական և սոցիալական վիճակը ժառանգել է անկախության 25 տարիների ընթացքում՝ առաջին երեք նախագահների կառավարման քաղաքականության արդյունքում: Թավշյա հեղափոխությունից հետո ժողովուրդը մեծ հավատով ակնկալում է ստեղծված իրավիճակի շտկում և բարելավում:

Հայաստանի համար արտագաղթը և ներգաղթը արտաքին միջավայրի հետ կապն է և դրա ազդեցությունը ներքին միջավայրի ինքնակազմակերպման վրա: Համակարգի սոցիալ-տնտեսական որակի բարելավումն ու լավարկումը միաժամանակ որոշիչ գործոն է ներգաղթը խրախուսելու և արտագաղթը կանխելու իմաստով:

Արտագաղթի երևույթը, որը ձևավորվել է ՀՀ անկախության 27 տարիների ընթացքում, իր բնականոն զագարացումն է ունենում: Սա համակարգային երևույթ է՝ կապված մեր սոցիալական, տնտեսական, քաղաքական, հոգեբանական իրողությունների հետ:

Հայաստանը միշտ ունեցել է արտագաղթ և ներգաղթ: Արևելյան Հայաստանի համար խիստ աղետաբեր եղավ Առաջին համաշխարհային պատերազմը, որից Vega hetveradardz 0%բնակչության թիվը կազմել է 720 հազ):

Բնակչության թիվը Արևելյան Հայաստանում 1913-1979 թթ. ունեցել է դրական սալդո [1] (նկ. 1):



Նկ. 1. Բնակչության թիվը Արևելյան Հայաստանում 1913-1979 թթ.

1950-ից մինչև 2100 թ-ի համար, ըստ ՄԱԿ-ի դեմոգրաֆիկ վերլուծության տվյալների [2], Հայաստանի բնակչության փոփոխության գծապատկերը բերված է նկ. 2-ում:



Նկ.2. Հայաստանի բնակչության ընդհանուր թիվը և դրա կանխատեսումը՝ ըստ լավագույն և վատագույն տարբերակների

Խորհրդային տարիներին (1920-1960թթ.) տնտեսության զարգացման առաջընթաց տեմպերը նպաստեցին աշխարհասփյուռ հայության վերադարձին Հայաստան նախկին Խորհրդային հանրապետություններից և արտերկրից: 1959-1979 թթ-ին Հայաստանի բնակչության թիվն ավելացավ 1.7 անգամ՝ 1 763 048-ից հասնելով 3 037 873 մարդու:

1980-ական թթ., ՀՀ-ում նկատվող սոցիալ-տնտեսական պայմանների դժվարություններին և լճացմանը զուգընթաց, նաև աշխատունակ բնակչության

թվի ավելացումը 25-29 տարեկանների շրջանում 7.5%-ով անհավասարակշռություն առաջացրեց աշխատանքի շուկայում՝ աշխատուժի առաջարկը գերակշռեց պահանջարկին: Արդյունքում Հայաստանն ունեցավ բացասական հաշվեկշիռ, որը 1980-1988 թթ-ին կազմեց 114800 մարդ:

Աղետալի երկրաշարժի, ԽՍՀՄ-ի փլուզման, զանգվածային գործազրկության, ցածր վաստակի, թանկության, սոցիալապես անապահով խավի մեծ մասշտաբների, էներգետիկ ճգնաժամի, կենսամակարդակի շեշտակի անկման, չհայտարարված պատերազմի և սահմանամերձ գոտիներում խաղաղ բնակչության թվի նվազման՝ ուրբանիզացիայի արդյունքում 1992 թ-ից հետո Հայաստանն ունի հիմնականում բացասական սալդո: Արտագաղթողները մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատեցին հիմնականում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում (Ռուսաստանում՝ 80%-ը, ԱՊՀ այլ երկրներ էին մեկնում 5, եվրոպական երկրներ՝ 10, իսկ ԱՄՆ՝ 5%): Սա արտագաղթի նոր տեսակ է, երբ արտադրողական տարիքի երիտասարդները, աշխատանք փնտրելով այլ երկրներում, այնտեղ էլ ընտանիք են կազմում, երեխաներ ունենում, ովքեր, որքան էլ որ հայեցի դաստիարակություն ստանան, միևնույն է, Հայաստանի բնակիչներ չեն լինի, նրանք և իրենց սերունդները կհամալրեն սփյուռքահայության շարքերը:

1992-2019 թթ. Հայաստանի 4 նախագահների իշխանության օրոք բացասական սալդոյի ծավալները և միջին տարեկան թվերը բերված են աղյուսակում [3]:

Աղյուսակ

Կառավարման տարիներ	ՀՀ նախագահ	Միգրացիոն հաշվեկշիռ	Միջին տարեկան ցուցանիշ, անձ/տարի
1992-1997թթ.	Լևոն Տեր-Պետրոսյան	-228 000	-38000
1998-2007 թթ.	Ռոբերտ Քոչարյան	-130600 +37000*	-9360
2008-2018 թթ.	Սերժ Սարգսյան	-348900	-34890
04.2018 թ.- 09.2019թ.	Արմեն Սարգսյան	+21000 -7800	-

**2004-2006թթ. տնտեսական բարվոք պայմանների, մեծ չափերի հասնող դրամական տրանսֆերտների ֆոնին արձանագրվեց դրական միգրացիոն սալդո:*

1993-2018 թթ-ին ՀՀ բնակչության միգրացիոն հաշվեկշիռը և թվաքանակը ներկայացված է նկ. 3-ում և 4-ում:



Նկ. 3. 1993-2019 թթ.-ին ՀՀ բնակչության միգրացիոն հաշվեկշիռը



Նկ. 4. 1993-2019 թթ.-ին ՀՀ բնակչության թվաքանակը, հազ. մարդ

Արտագաղթի և ուրբանիզացիայի պատճառով փոխվել է նաև Հայաստանի բնակչության ժողովրդագրական պատկերը [4, էջ 23-26, 5, էջ 23-27, 6] (նկ. 5...7):



Նկ. 5. ՀՀ բնակչության ընդհանուր թվի, աշխատունակ բնակչության, դրա տարիքից ցածր և բարձր թվաքանակների փոփոխությունները, հազ.մարդ

Ինչպես երևում է նկ. 5-ից, ՀՀ-ում աշխատունակ տարիքից բարձր բնակչության թիվն աճել է 11.81 %, մինչդեռ 7 %-ից ավելիի դեպքում երկիրը համարվում է ծերացող: Կտրուկ նվազել է աշխատունակ տարիքի բնակչության թիվը 15-29 և 45-54 տարիքային խմբերի դեպքում:



Նկ. 6. ՀՀ բնակչության թիվը 0-4, 15-29, 30-44, 45-54, 55-64 տարիքային խմբերի դեպքում



Նկ. 7. Ըստ տարիքային խմբերի ՀՀ-ի բնակչության թվի փոփոխությունն ու կանխատեսումը մինչև 2100 թ.

Արտագաղթը կանխելու համար գտնում ենք.

1. Հայաստանը միլիտարիզացված երկրների շարքում գրավում է երրորդ հորիզոնականը Իսրայելից և Սինգապուրից հետո [6]: Միլիտարիզացված երկրները հրապուրիչ չեն ներդրողների համար: Հետևաբար, աշխատատեղերի ստեղծման հիմնական ծանրությունը պետք է ընկնի տնտեսության ներքին ռեզերվների բացահայտման վրա: ՀՀ բնակլիմայական պայմաններն ու ընդերքի հարստութ-

յունը բնության պարգև է, և այն պետք է ճիշտ օգտագործել՝ ավելի շատ ավարտուն ապրանքներ և ծառայություններ արտահանել և ավելի շատ հումք ներկրել:

2. Որդեգրել աշխատանքային շուկաներում զբաղվածության լավացման և գործազրկության կրճատման նորացված քաղաքականություն, որի հիմնական ուղղությունները ներկայացված են նկ. 8-ում:



Նկ. 8. Զբաղվածության լավացման և գործազրկության կրճատման առաջարկվող հիմնական ուղղությունները

3, 1990-ական թվականներին սեփականաշնորհված արդյունաբերական ձեռնարկությունների նշանակալից մասը շատ կարճ ժամանակում սնանկ հայտարարվեցին: Արդյունքում՝ 100 հազարավոր քաղաքացիներ հայտնվեցին գործազուրկի կարգավիճակում, արտադրության միջոցները թափոնի գներով վաճառվեցին արտերկրներում: Դրանցից գոյացած գումարները սեփականատերերի կողմից վերածվեցին ռեստորանների, սրճարանների, հյուրանոցների, խաղատների, ապարանքների և այլնի, որոնք աշխատեցնելու համար աշխատատեղերի քանակը խիստ սահմանափակ է: Գործազուրկ դարձան մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձինք, ովքեր բռնեցին արտագաղթի ուղին:

4. Հետևաբար, ՀՀ կառավարության հիմնական խնդիրներից պետք է լինի կանոնակարգել աշխատանքային միգրացիան, որի արդյունքում կլուծվի հայ միգրանտների աշխատանքային պաշտպանվածության հարցը, նաև աշխատանքային ստաժի և կենսաթոշակային խնդիրները:

5. Կարևորվում է նաև ցիկլիկ միգրացիայի կազմակերպումը մասնագիտական որակավորում ունեցող անձանց համար: Այն ենթադրում է մարդկանց ժամանակավոր՝ 2-3 տարի, աշխատանքային գործունեություն այլ երկրում, ապա վերադարձ հայրենիք:

6. Հարկային, վարկային, ֆինանսական ներդրումների քաղաքականության բարելավման, տարածքների և արտոնությունների հատկացման միջոցով խրախուսել փոքր բիզնեսը՝ հնարավորություն տալով մասնագետներին հաղթահարելու աղքատության խնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.aravot.am/2018/08/30/977745/
2. Department of Economic and Social Affairs Population Division. World Population Prospects The 2015 Revision. Volume II: Demographic Profiles. United Nations. New York, 2015
3. Երեք նախագահություն և ժողովրդագրական կորսված հեռանկարներ. արագ լուծումների ժամանակն ու հրամայականը, https://www.aravot.am/2018/08/30/977745/ © 1998 - 2019 Առավոտ – Լուրեր Հայաստանից
4. Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք. Statistical Yearbook of Armenia-Статистический ежегодник Армении 2018:
5. Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք. Statistical Yearbook of Armenia-Статистический ежегодник Армении 2015:
6. https://gmi.bicc.de/index.php?page=rankingtable?year=2013&sort=rank_asc

К.С. МНАЦАКАНЯН, Н.Э. КАЗАРЯН

МИГРАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ЗАДАЧИ В АРМЕНИИ

Рассмотрены демографическая картина населения РА, ситуация утечки молодежи и интеллектуального потенциала в 1913-2019 гг. Комментарии обоснованы диаграммами, построенными и проанализированными по статистическим данным. Даются конкретные предложения относительно путей предотвращения миграции и урбанизации.

Ключевые слова: миграция, урбанизация, экономический кризис, занятость, экономически активное население.

K.S. MNATSAKANYAN, N.E. GHAZARYAN

MIGRATION AND MIGRATION PROBLEMS IN ARMENIA

The demographic picture of the RA population and the situation of youth and intellectual potential migration in 1913-2019 are considered. The comments are based on the diagrams constructed and analyzed according to statistical data. Concrete suggestions are given on the ways to provent migration and urbanization.

Keywords: migration, urbanization, economic crisis, employment, economically active population.

УДК 331.101.3:657.6

С.Г. МАНТАШЯН

АУДИТ МОТИВАЦИИ ТРУДОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Рассматривается аудит мотивации трудовой деятельности как один из новейших инструментов управления.

Ключевые слова: мотивация и стимулирование персонала, аудит мотивации трудовой деятельности, управленческая технология.

Общеизвестна роль мотивации в обществе вообще и, в частности, в контексте управления организациями. В современных так называемых информационных (постиндустриальных) обществах [1-6] результаты деятельности организации все в большей степени зависят от мотивации персонала. Обязательным становится наличие определенных инструментов для получения информации о состоянии мотивационной системы членов организации. Однако в армянских реалиях эффективность мотивационной функции организации оценивается время от времени и подчас субъективно. Для этого не всегда используется качественный инструментарий. В результате управленческая деятельность зачастую осуществляется неэффективно.

Организации, с которыми мы сталкиваемся в наши дни, являются многокомплексными целевыми социальными системами. Более того, они состоят из связанных друг с другом различных социальных институтов [7]. Система мотивации персонала является одним из таких институтов. Однако она относится к той категории социальных институтов, которые специально создаются для регулирования процессов, происходящих в социальной организации, и становится подсистемой в механизме управления персонала [8]. Как и на любую другую социальную структуру, на мотивацию воздействует ряд факторов различного характера. В результате система мотивации не в состоянии выполнять